



**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԳՈՐԾԻՔ-ԶԵՎԱԶԱՓ**

ՄԱՍ 1

Լրացվում է գործիք-ձևաչափը կազմողի կողմից՝ հիմք ընդունելով Ծրագրի նպատակը, խնդիրները՝ օգտվելով համապատասխան լիազոր մարմինների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, շրջակա միջավայրի նախարարությունների, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներից, համապատասխան մարզպետարանների կայքերից, Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) տվյալներից, Տարածքային զարգացման հիմնադրամի կայքից, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից փոքր ՀԷԿ-երի և հանքարդյունաբերական ընկերությունների ոլորտներում կատարված ուսումնասիրությունների տվյալների բազայից, պաշտոնական այլ փաստաթղթերից և ստորագրված պայմանագրերից:

Ընդհանուր տվյալներ համայնքի մասին

Մարզ - Գեղարքունիք

Համայնք – Մարտունի

Համայնքի ղեկավար՝ Հովհաննես Հովեյան, հեռախոս՝ 060-743-403, +374 93 68-06-90

աշխատակազմի քարտուղար՝ Ռուբիկ Սահակյան, համայնքի էլեկտրոնային կայք՝

<http://martuni.am/>, էլ. հասցե՝

martuni.gegharquniq@mta.gov.am

Համայնքի ավագանու անդամներ (անուն, ազգանուն)՝

Հովհաննես, Հովեյան, Վահագն Դավթյան, Լուսինե Վարդանյան, Անդրանիկ Հարությունյան, Արթուր Կարապետյան, Լիանա Հովհաննիսյան,, Տարոն Արշակյան, Մարինա Հովեյան, Դավիթ Դավթյան, Հուսիկ Սիմոնյան, Անդրանիկ Գրիգորյան, Օլգա Դավթյան, Արմեն Սեդրակյան, Տիգրան Ալեքսանյան, Գոհարիկ Մանուկյան, Վահան Թամոյան, Պապ Դանիելյան, Սվետլանա Հարությունյան, Սեդրակ Սահակյան, Նորիկ Հունանյան, Հակոբ Վարդանյան, Սյուզաննա Մարկարյան, Հակոբ Բարոյան, Եվա Սուքիասյան, Նադաշ Հակոբյան, Կարինե Հովհաննիսյան, Արարատ Խաչատրյան:

Մարտունի համայնքն իր մեջ ընդգրկում է՝ Մարտունի քաղաքը, Աստղաձոր, Արծվանիստ, Գեղհովիտ, Երանոս, Զուլաքար, Լեռնակերտ, Լիճք, Ծակքար, Ծովասար, Ծովինար, Զորագյուղ, Մադինա, Ներքին Գետաշեն, Նշխարք, Վաղածեն, Վարդաձոր, Վարդենիկ, Վերին Գետաշեն գյուղերը:

Համայնքի բնակավայրերում գտնվում են պատմամշակութային բազմաթիվ հուշարձաններ՝ անտիկ դարաշրջանի ամրոցներ, դամբարանադաշտեր, գյուղատեղիներ, գերեզմանոցներ, տապանաքարեր, խաչքարեր, եկեղեցիներ և մատուռներ

<https://hushardzan.am/archives/category/gegharkunik/gegharkunik-monuments>:

Համայնքի սոցիալական, տարիքային, գենդերային պրոֆիլ

Մարտունի խոշորացված համայնքի բնակավայրերի բնակչության թիվն՝ ըստ նախկին համայնքների անձնագրերի՝

Ընդհանուր թիվը՝ 85 227 բնակիչ (բացառությամբ Ծակքար գյուղի տվյալի, ինչը համացանցում առկա չէ), որից՝ Մարտունի՝ 13675, Երանոս՝ 5389, Վարդաձոր՝ 2759, Զորագյուղ՝ 2743, Ծակքար՝ ---, Ծովասար՝ 2987, Լիճք՝ 5423, Վերին Գետաշեն՝ 4447, Ներքին Գետաշեն՝ 8785, Մադինա՝ 1124, Գեղհովիտ և Լեռնակերտ՝ 6428 (Լեռնակերտը և Գեղհովիտը միավորված են), Վաղաշեն՝ 4100, Աստղաձոր՝ 4567, Զուլաքար՝ 5976, Վարդենիկ՝ 8374, Ծովինար՝ 5149, Արծվանիստ՝ 3301:

Համայնքի սոցիալական, տարիքային, գենդերային պրոֆիլ

Ըստ բնակավայրերի անձնագրերի՝

Ընտանեկան նպաստ ստացողների թիվը 4,082 է:

Տնային տնտեսությունների թիվը 23,897 է: (բացառությամբ Ծակքար և Ծովինար բնակավայրերի տվյալների):

Թոշակառուների թիվը՝ 8546

Հաշմանդամներ՝ 3188

Համայնքում գործում են առողջապահական հետևյալ հաստատությունները՝

Մարտունի քաղաքում՝ 1 հիվանդանոց, պոլիկլինիկա, հակահամաճարակային կենտրոն, ծննդատուն, հակաժանտախտային կայան

Բնակավայրերում գործում են է բուժհաստատություն՝ այդ թվում 2 բուժկետ, 3 առողջության առաջնային պահպանման կենտրոն, 6 բուժամբուլատորիա: Արծվանիստ, Ծակքար, Ծովինար, Զորագյուղ և Վարդենիկ բնակավայրերի մասին տվյալն առկա չէ:

Մարտունի համայնքի դպրոցական հաստատություններ

Գործում է 26 դպրոց, (Ծովինար և Արծվանիստ բնակավայրերի տվյալներն առկա չեն), 2 երաժշտական դպրոց, մեկը՝ Մարտունիում, մյուսը՝ Վարդենիկում: Գործում է 2 մարզադպրոց, մեկը՝ Մարտունիում, մյուսը՝ Լիճքում:

Մարտունիում գործում է 1 արվեստի դպրոց, 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 1 բարձրագույն ուսումնական հաստատություն, հումանիտար և բժշկական քոլեջներ, Եվրոպական կրթական ակադեմիային մասնաճյուղ:

Մարտունի համայնքի նախադպրոցական հաստատություններն

Համայնքում գործում է 16 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Մադինա և Ջուլաքար բնակավայրերը չունեն նախադպրոցական հաստատություններ: Ծովինար և Արծվանիստ բնակավայրերի տվյալները բացակայում են:

Մարտունի համայնքի հիմնական արդյունաբերական (արտադրական) ոլորտներն են՝

Էլ. էներգիայի արտադրություն՝ փոքր ՀԷԿ-եր, շինանյութերի արտադրություն, հացի և թարմ ալյուրի, հրուշակեղենի, մետաղապլաստե դռների և լուսամուտների, կահույքի և գյուղմթերքի արտադրություններ, ածխաթթու գազի արտադրամաս (Լիճքում), ոչ մետաղական հանքանյութի արդյունահանում: Արտադրված արտադրանքը հիմնականում սպառվում է ներքին շուկայում, ՀՀ տարածքում:

Բնակչության հիմնական զբաղմունքը

Գյուղատնտեսական գործունեություն, առևտուր, հումքի մշակում, Էլեկտրաէներգիայի արտադրություն, շինարարություն, գյուղատնտեսական ծառայությունների մատուցում, հյուրանոցային և ռեստորանային ծառայություններ, տրանսպորտ և կապ, տեղական ինքնակառավարում, կրթություն, այդ թվում՝ նախադպրոցական կրթություն, առողջապահություն և սոցիալական ծառայություն, կոմունալ, սոցիալական և անհատական ծառայություններ, աշխատողներ ՀՈԱԿ-ներում, պետական մարմիններում, հասարակական միավորումներում:

Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը՝ 78,296.95 հա

Ըստ բնակավայրերի անձնագրերի դրանք կազմում են՝ 78,296.95 հա, բացառությամբ Ջուլաքար, Ծովինար, Արծվանիստ բնակավայրերի, որոնց գյուղատնտեսական նշանակության հողերի տվյալները Գեղարքունիքի մարզպետարանի կայքում բացակայում է), որից Մարտունի՝ 3425 հա, Երանոս՝ 4309,94 հա, Վարդաձոր՝ 2793.94 հա, Չորագյուղ՝ 473,53 հա, Ծովասար՝ 7125 հա, Լիճք՝ 7796,61 հա, Վերին Գետաշեն՝ 9901.65 հա, Ներքին Գետաշեն՝ 1079,97 հա, Մադինա՝ 7035.13 հա, Գեղհովիտ (ներառյալ Լեռնակերտ)՝ 14198.8 հա, Վաղաշեն՝ 5560,75 հա, Աստղաձոր՝ 2402.84 հա, Վարդենիկ՝ 12193.79 հա:

Համայնքի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության և էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր մակերեսը

Երանոս՝ արդյունաբերության, ընդերքօգտ. և այլ արտադրական նշանակության հողեր - 35,52 հա, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր - 11,98 հա:

Վարդաձոր՝ արդյունաբերության, ընդերքօգտ. և այլ արտադրական նշանակության հողեր - 1,55 հա, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր - 4,75 հա: Մյուս բնակավայրերի համար տվյալները բացակայում են:

Համայնքի ուժեղ կողմերն են՝

Համայնքի կենտրոնում տարբեր մասնագիտությունների գծով որակյալ կադրերի պատրաստման համար կրթօջախների առկայությունը, տեղական գյուղմթերքների վերամշակման և պահածոյացման արտադրամասերի ստեղծման համար առկա արտադրական տարածքների առկայությունը, բավարար աշխատուժի առկայությունը, համայնքի բազմաթիվ պատմամշակութային հուշարձանների, ինչպես նաև համայնքին հարող Սևանա լճի հենքի վրա տեղական և միջազգային տուրիզմի զարգացման հնարավորությունը, հանրապետական նշանակության տրանսպորտային ուղիների օգտագործումը, համայնքի բնակավայրերի գյուղատնտեսական հողերի բավարար մակերեսը գյուղատնտեսական մթերքների մշակման համար և արոտավայրերի և կերային բազայի օգտագործմամբ անասնապահության զարգացման հնարավորությունը, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման համար համայնքի վարչական տարածքում գործունեություն իրականացնող՝ փոքր հիդրոէլեկտրակայաններ, ոչ-մետաղական հանքավայրեր, նախատեսվող արևային էներգիայի կայաններ շահագործող կազմակերպություններից և սփյուռքում գտնվող համաերկրացիներից ֆինանսական օժանդակության ստացման հնարավորության օգտագործումը, համայնքի հիմնական բնակավայրերում երիտասարդ աշխատուժի պոտենցիալը :

Համայնքի թույլ կողմերն են՝

Ներհամայնքային երկրորդական և ծայրամասային ճանապարհների, փողոցների վատ վիճակը, գործազրկության բարձր մակարդակի հետևանքով տարեցտարի բնակչության արտագաղթն՝ իր բոլոր բացասական հետևանքներով, բարձրորակ սերմացուների բացակայությունը, աղքատության շարունակվող աճը, նոր ձևավորվող բնակելի թաղամասերում ենթակառուցվածքների՝ էներգամատակարարման, գազամատակարարման, խմելու և ոռոգման համակարգերի բացակայությունը որոշ գյուղերում, հիմնական բնակավայրերում կոյուղու և կոյուղաջրերի քիմիական և կենսաբանական մաքրման կայանների բացակայությունը, առանձին բնակավայրերի միջև ջրերի բաշխման վերաբերյալ հակասությունների և կոնֆլիկտների առկայությունը (Աստղաձոր-Ձուլաքար), կոնֆլիկտները ՓՀԷԿ-երի և համայնքի բնակավայրերի միջև («Արգիչի» ՓՀԷԿ-Մաղինա, Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն գյուղեր, «Ձորագյուղ» - 1,3 ՓՀԷԿ-եր-Ձորագյուղ համայնք, «Վարդենիկ» ՓՀԷԿ-Վարդենիկ գյուղ), համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներ իրացնելու, մինչև շուկա հասցնելու բազմաթիվ խնդիրների ու դժվարությունների առկայությունը, զգալի քանակությամբ հողերի անջրդելիությունը (Մարտունի, Վերին Գետաշեն, Աստղաձոր), բնակավայրերում ոռոգման և խմելու ջրի համակարգերի մաշվածությունը, դպրոցների, նախադպրոցական հաստատությունների, հասարակական հիմնական շենքերի անմխիթար վիճակը, համայնքի վարչական տարածքում գործունեություն իրականացնող՝ փոքր հիդրոէլեկտրակայաններ, ոչ-մետաղական հանքավայրեր, նախատեսվող արևային

էներգիայի կայաններ շահագործող կազմակերպությունների ֆինանսական միջոցներից օգտվելու անբավարար ջանքերը:

Համայնքի սոցիալական և բնապահպանական բացահայտված խնդիրներն՝ ըստ համայնքի անձնագրի և սոցիալ-տնտեսական զարգացման վերջին գործող ծրագրի

Չնայած նրան, որ, ըստ Վիճակագրական կոմիտեի 2019թ-ի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ուսումնասիրության, Գեղարքունիքում 2018թ-ին աղքատության ցուցանիշը եղել է 5.9%, այնուամենայնիվ, դա միջինացված թիվ է և առանձին բնակավայրերում այդ ցուցանիշն ավելի բարձր է:

- **Բնակչության զբաղվածության ցուցանիշը** - համայնքի շուրջ 500 ընտանիք մեկնում է արտագնա աշխատանքի:
- **Ոռոգման և խմելու ջրերի հասանելիությունը** – Խմելու ջրի խնդիր Վերին Գետաշեն համայնքը չունի: Սա համարվում է համայնքի ուժեղ կողմերից: Ըստ հնգամյա ծրագրի. «Մի շարք օբյեկտիվ պատճառներով համայնքի ունեցած 1130 հա հողատարածության զգալի մասը չի օգտագործվում՝ 500 հեկտար ցանքատարածությունն անջրդիր է, չի մշակվում գյուղից հեռու լինելու պատճառով և ենթարկվում է երոզիայի, որի վերականգման համար առաջիկայում զգալի միջոցներ ու ժամանակ է պահանջվելու»: «Անհրաժեշտություն կա վերանորոգելու գյուղի ոռոգելի տարածքների համար նախատեսված ոռոգման ցանցի առունները»:

Համայնքում գործունեություն են իրականացնում հետևյալ կազմակերպությունները՝

- **Ոչ-մետաղական հանքավայր շահագործող կազմակերպություններ՝**

1. «ՔԱԼՈՅԱՆ» ՍՊԸ, ՇԱԹ-29/598.2019թ., Ձորագյուղի (Ծակքարի) պեռլիտային ավազի հանքավայրի 2-րդ տեղամաս, հանքի մակերեսը՝ 2,51 հա, տարեկան արդյունահանվող ծավալը՝ 8039,0 մ³ պեռլիտային ավազ:
2. «ՇՈՂԱԳԱ» ՍՊԸ, ՇԱԹ-29/600. 2019թ. Ձորագյուղի (Ծակքարի) պեռլիտային ավազի հանքավայրի 2-րդ տեղամաս, հանքի մակերեսը՝ 1,7 հա, տարեկան արդյունահանվող ծավալը՝ 10796.2 մ³ պեռլիտային ավազ:
3. «ՍՅՈՒԶԻ-ՀՐԱԶՅԱ» ՍՊԸ, ՇԱԹ-29/638, 2021թ., Ձորագյուղի (Ծակքարի) պեռլիտային ավազների հանքավայր, 3,55 հա, տարեկան արդյունահանվող թույլատրելի ծավալը՝ 10672.4 մ³ պեռլիտային ավազ:
4. «ՄԵՐ ՔԱՐԵՐ» ՍՊԸ, ՇԱԹ-29/639, 2021թ., Մարտունու բազալտների /1A-Բլոկ/ հանքավայր, հանքի մակերեսը՝ 4,14 հա., տարեկան թույլատրելի արդյունահանման ծավալը՝ 12472,0 մ³ բազալտ:
5. «ՄԱՐԻԱՄ-ԳԱՐԻԿ» ՍՊԸ, ՇԱԹ-29/644, 2021թ., Մարտունու բազալտների հանքավայրի (2B և 3CI բլոկներ), հանքի մակերեսը՝ 2,25 հա, տարեկան թույլատրելի ծավալը՝ 6150,0 մ³ բազալտ:
6. «Բարոյան եղբայրներ» ՍՊԸ, ՇԱԹ-Վ-29/143, 2015, Սևոյի ձորի բազալտի հանքավայր (Զոլաքար), հանքի մակերեսը՝ 6,67 հա, տարեկան արդյունահանումը՝ 3600 մ³:
7. «Պերլարո լոկալ ինվեսթմենթս» ՍՊԸ, Շաթվ-29/226, ՀՀ Գեղարքունիքի մարզ, Միրունձորի գաբբրոներ, հանքի մակերեսը՝ 0,56 հա, արդյունահանվող ծավալը՝ 58000,0մ³ գաբբրո:

- **Համայնքի վարչական տարածքում շահագործվող ՓՇԷԿ-եր** (ՓՇԷԿ-ը շահագործող ընկերության կամ ՀԷԿ-ի անվանումը, տեղակայման գետը կամ համակարգը, արտադրած էլեկտրաէներգիան)
 1. «Արգիճի» ՓՇԷԿ, «Հիդրոկոռպորացիա» ՓԲԸ, հզորությունը՝ 9720 կվտ, Արգիճի գետ,
 2. Էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրությունը՝ 232 մլն. կվտ/ժ, 2019թ, արտադրել է 656624,5 հազ. դրամ ապրանքային արժեքով 22708,9 կվտժ էլեկտրաէներգիա, 2020 թվականի օգոստոսի դրությամբ արտադրել է 815.099 կվտժ էլեկտրաէներգիա:
 3. «Ձորագյուղ-1», «Սեկտոր Քվանտ» ՍՊԸ, հզորությունը՝ 350կվտ, էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրությունը՝ 3,8 մլն. կվտ/ժ, 2019թ, արտադրել է 73317,5 հազ. դրամ ապրանքային արժեքով 3808,0 կվտժ էլեկտրաէներգիա, 2020 թվականի օգոստոսի դրությամբ արտադրել է 815.099 կվտժ էլեկտրաէներգիա: Ըստ ՓՇԷԿ-ի կառուցման նախագծի՝ « Ձորագյուղ 1» ՓՇԷԿ-ը կառուցվել է Ձորագյուղի ոռոգման ջրատարի վրա, ըստ վերազինման նախագծի՝ Ձորագյուղ գետի անանուն վտակի վրա:
 4. «Ձորագյուղ-3», «Սեկտոր Քվանտ» ՍՊԸ, հզորությունը՝ 660կվտ, էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրությունը՝ 4,6 մլն. կվտ/ժ: 2019թ, արտադրել է 84317,4 հազ. դրամ ապրանքային արժեքով 4381,1 կվտժ էլեկտրաէներգիա, 2020 թվականի օգոստոսի դրությամբ արտադրել է 2932.966 կվտժ էլեկտրաէներգիա: Ըստ ՓՇԷԿ-ի կառուցման նախագծի՝ «Ձորագյուղ 3» ՓՇԷԿ-ը կառուցվել է Ձորագյուղի ոռոգման ջրատարի վրա: Հետագայում ՓՇԷԿ-ի վերազինման արդյունքում՝ Ձորագյուղ գետի անանուն վտակի վրա:
 5. «Մարտունի» ՓՇԷԿ, «ՄԿՇԳ Էներգիա», ՍՊԸ հզորությունը՝ 1800 կվտ, էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրությունը՝ 3,5 մլն. կվտ/ժ, Մարտունի գետ: 2019թ, արտադրել է 98757,7 հազ. դրամ ապրանքային արժեքով 98791,7 կվտժ էլեկտրաէներգիա, 2020 թվականի օգոստոսի դրությամբ արտադրել է 2465.104 կվտժ էլեկտրաէներգիա:
 6. «Վարդենիկ» ՓՇԷԿ, «Ջրասահք» ՍՊԸ, հզորությունը՝ 6170 կվտ, Էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրությունը՝ 14.80 մլն.կվտ.ժամ, Վարդենիս գետ: 2019թ, արտադրել է 412603,8 հազ. դրամ ապրանքային արժեքով 14335,9 կվտ/ժ էլեկտրաէներգիա, 2020 թվականի օգոստոսի դրությամբ արտադրել է 9,699,212 կվտ/ժ էլեկտրաէներգիա:
- 2021 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն՝ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի վարչական տարածքում կառուցվող կայաններն ըստ կարգավորվող ընկերությունների հետևյալներն են՝
 1. «ԲԱՐԻ ԱՐԵՎ» ՍՊԸ, լիցենզիայի համարը՝ 626, կառուցման ժամանակահատվածը՝ 01.12.2018 01.03.2022, Էլ. էներգ. արտադ. ժամանակահատված /ավարտ՝ 01.12.2040, կայանի անվանումը՝ «Բարի Արև», հզորությունը՝ 5 000,0 կվտ, տարեկան

արտադրանքը՝ 8,58մ, ներդրումների ծավալը՝ 1 516,8 մլն. դրամ, արևային էլեկտրակայան Գեղարքունիք, գ. Աստղաձոր, Մարտունի համայնք

2. «ՊՐՈՄ ՄԱՆ» ՍՊԸ, լիցենզիայի համարը՝ 629, կառուցման ժամանակահատվածը՝ 01.12.2018 - 01.08.22, Էլ. էներգ. արտադ. ժամանակահատված /ավարտ՝ 01.12.2040, կայանի անվանումը՝ «Պրոմ Սինթեզ», հզորությունը՝ 5 000,0 կվտ, տարեկան արտադրանքը՝ 8,60 մլն. կվտ/ժամ, ներդրումների ծավալը՝ 1 536,0 մլն. դրամ, արևային էլեկտրակայան:
3. «Ա-Ս ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ, լիցենզիայի համարը՝ 630, կառուցման ժամանակահատվածը՝ 01.12.2018 -01.03.2022, Էլ. էներգ. արտադ. ժամանակահատված /ավարտ՝ 01.12.2040 կայանի անվանումը՝ «Ա-Ս Էներջի», հզորությունը՝ 4 995,6կվտ, տարեկան արտադրանքը՝ 8,50 մլն. Կվտ/ժամ, ներդրումների ծավալը՝ 1 535,6 մլն. դրամ, Գեղարքունիք, Աստղաձոր, Մարտունի:

2020թ-ի դրությամբ համայնքի բնապահպանական բնութագիրն՝ ըստ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի <http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/Annual-2020.pdf>), հասարակական կազմակերպությունների և պաշտոնական այլ աղբյուրների

- Համայնքի մթնոլորտային օդի որակը՝ տվյալներ չկան
- Համայնքի տարածքով հոսող գետերի աղտոտվածության մակարդակը՝

«Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի համաձայն՝ 2020 թվականին Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև գնահատվել է լավ՝ 2-րդ դաս, գետաբերանում՝ 3-րդ դաս՝ պայմանավորված ամոնիում իոնով և մանգանով: Մարտունի գետը Գեղիովիտից վերև գնահատվել է 3-րդ դաս՝ պայմանավորված մանգանով և ալյումինով, գետաբերանում գնահատվել է 4-րդ դաս՝ պայմանավորված մանգանով և ալյումինով: Գետաբերանում Մարտունի գետում առկա է եղել երկաթ և կոբալտ (3-րդ դաս): Արգիճի գետը Լեռնահովիտից վերև գնահատվել լավ 2-րդ դաս, գետաբերանում, երկաթով և վանադիումով պայմանավորված, գնահատվել է 3-րդ դաս: Ծակքար գետը գնահատվել է 3-րդ դաս՝ պայմանավորված գետաբերանում մոլիբդենի, երկաթի և վանադիումի առկայությամբ: Պարբերաբար «Շանթ Սեյրան» ՍՊԸ-ի կողմից խախտվում է նաև Մարտունի գետի հունը <https://www.ecolur.org/hy/news/mining/12017/>, <https://www.ecolur.org/hy/news/officials/12778/>:

- Համայնքի տարածքում արտադրական թափոնների և հանքարդյունաբերական լցակույտեր չկան:
- Հողերի աղտոտվածության մակարդակի վերաբերյալ տվյալներ չկան:
- Անտառապատվածություն 0 հա, ըստ մարզային կայքերի:

2020թ. Մարտունի համայնքն ընդգրկող բնակավայրերում իրականացվել են հետևյալ սուբվենցիոն ծրագրերը

Նախկին համայնքի անվանումը	Ծրագրի անվանումը	Ծրագրի ոլորտը	Մրցույթի արդյունքում ծրագրի գումարը	ՀՀ պետական բյուջեից ամաֆինանսավորման չափը
Երանոս	1. Երանոս համայնքի խմելու ներտնտեսային ջրամատակարարման ցանցի 3-րդ փողոցի սկզբնամասից մինչև 3-րդ փողոցի 7-րդ նրբանցքի թիվ 3 տան մոտի հատվածի, 7-րդ փողոցի սկզբնամասից մինչև 7-րդ փողոցի թիվ 16 տան մոտի հատվածի հիմնանորոգման աշխատանքներ	Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	21 589 194	33 959 900
	2. Երանոս համայնքի մուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի ուժեղացում և հիմնանորոգում	մանկապարտեզների կառուցում, վերակառուցում/նորոգում	29 382 850	20 194 103
	3. Երանոս համայնքի մի շարք փողոցների ասֆալտապատում	Ասֆալտապատում	57 641 000	35 993 573
Արծվանիստ	1. Արծվանիստ համայնքի նոր աղբյուրակապի և սնման ջրատարի կառուցում	Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	19 100 000	14 600 600
	2. Արծվանիստ համայնքի մանկապարտեզի տանիքի վերանորոգում	մանկապարտեզների կառուցում, վերակառուցում/նորոգում	14 640 000	10 223 200
	3. Արծվանիստ համայնքի 22-րդ միջհամայնքային փողոցի ասֆալտապատում	ասֆալտապատում	54 380 000	33 959 300
Վաղաշեն	1. Վաղաշեն համայնքի մանկապարտեզի գույքի ձեռքբերում	մեքենասարքավորումների ձեռքբերում	10 397 650	5 718 350
	2. Վաղաշեն համայնքի «Կոփոյ վար» կոչվող տարածքի ջրարբիացման, ոռոգման, կենցաղային և տեխնիկական ջրի ջրաքանակի ավելացման աշխատանքներ	ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	47 040 000	34 449 100
	3. Վաղաշեն համայնքի կարիքների համար բազմաֆունկցիոնալ ամբարձիչ էքսկավատորի (անհավասար անիվներով) ձեռքբերում	մեքենասարքավորումների ձեռքբերում	33 500 000	18 425 000
Զոլաքար	1. Մշակույթի կենտրոնի վարչական շենքի ներքին հարդարում	Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում	21 920 824	10 706 600
	2. Զոլաքար համայնքում խմելու ջրի ներքին ցանցի կառուցում	Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման	114 900 000	83 503 000

		համակարգի կառուցում/նորոգում		
	3. Զոլաքար համայնքի ներհամայնքային փողոցների լուսավորության ցանցի կառուցում	փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	18 818 328	12 953 413
Լիճք	1. Լիճք համայնքի Ա 7 թաղամասի 5-րդ, 7-րդ, 10-րդ և 12-րդ փողոցների խմելու ջրագծի կառուցում	Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	4 400 000	2 127 788
	2. Լիճք համայնքի Ա 6 թաղ թիվ 1 փող., Ա 2 թաղ. թիվ 1 և 9 փողոցների ասֆալտապատում	ասֆալտապատում	81 833 000	52 478 911
Մաղինա	1. Մաղինա համայնքի ջրահեռացման և ոռոգման առուների կառուցման աշխատանքներ	ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	14 095 020	10 462 697
	2. Մաղինա համայնքի թիվ 1,2,4,6,8,9,10 փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման շարունակական աշխատանքներ	փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	8 507 000	5 861 895
Աստղածոր	1. Աստղածոր համայնքի Զորավար Անդրանիկի և 21-րդ փողոցների ասֆալտապատում	ասֆալտապատում	90 485 000	57 271 591
	2. Աստղածոր համայնքի Զորավար Անդրանիկ փողոցի արտաքին լուսավորության ցանցի կառուցում	փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	8 300 000	6 003 400
Վերին Գետաշեն	1.Վերին Գետաշեն համայնքի ոռոգման ներքին ցանցի համակարգի վերակառուցում	ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	40 516 000	30 243 626
	2. Վերին Գետաշեն համայնքի Ա թաղ.1-ին փող մինչև 39շ., մինչև 57/6 շ., 83/9 և 78 շ., Բ թաղ. 3 , 5, 6, 9, 11 և 13 փողոցների ասֆալտապատում	ասֆալտապատում	115 200 000	72 120 000
Վարդենիկ	1. Համայնքում գոյություն ունեցող 2 խորքային հորերի մաքրում և վերագործարկում	Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	22 515 891	16 555 288
	2.Վարդենիկ համայնքի «Մանկական երաժշտական դպրոցի հիմնանորոգում»	Հասարակական շենքերի (մշակիչի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում	16 969 427	8 314 514
	3. Վարդենիկ համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցում և գոյություն ունեցող 3330 զճմ հատվածում էլ. լարերի և լուսատուների փոխարինում LED 60W, 5000k լուսատուներով	փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	18900000	13 271 700

	4.Վարդենիկ համայնքի ներհամայնքային ասֆալտապատում	համայնքի ճանապարհների	ասֆալտապատում	288 888 000	177 081 600
Գեղիովիտ	1. Գեղիովիտ համայնքի «Չայիրներ» թաղամասի ռոտզման ջրատարի կառուցում		ռոտզման համակարգի կառուցում/նորոգում	30 343 618	22 213 533
	2. Գեղիովիտ համայնքի փողոցների ասֆալտապատում		ասֆալտապատում	91 091 000	59 072 021
	3. Գեղիովիտ համայնքի արտաքին լուսավորության ցանցի կառուցում		փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	15 280 000	11 188 704
Ձորագյուղ	1. Ձորագյուղ համայնքի Բախչի առու կոչվող ռոտզման ջրատարի հիմնանորոգում		ռոտզման համակարգի կառուցում/նորոգում	16 998 000	12 546 100
	2. Ձորագյուղ համայնքի 11-րդ և 12-րդ փողոցների ասֆալտապատում		ասֆալտապատում	52 564 000	32 858 756
	3. Ձորագյուղ համայնքի մշակույթի կենտրոնի հիմնանորոգում		Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում	45 540 000	23 744 864
Մարտունի	1. Երևանյան փողոցի երթևեկելի հատվածի ասֆալտապատում և մայրերի կառուցում		ասֆալտապատում	128 877 000	80 286 953
	2. Մարտունի համայնքի 4 մանկապարտեզների շենքերի նորոգում		մանկապարտեզների կառուցում, վերակառուցում, նորոգում	14 494 220	10 893 400
	3. 4 մանկապարտեզների և մարզադպրոցի շենքերի տանիքներին արևային ջրատաքացուցիչներ և համայնքապետարանի շենքի տանիքին ֆոտովոլտային կայանի տեղադրում		Վերականգնվող էներգետիկա, այդ թվում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում	29 500 000	20 289 438
Ներքին Գետաշեն	1. Ներքին Գետաշեն համայնքի ռոտզման ցանցի կառուցում		ռոտզման համակարգի կառուցում/նորոգում	80 420 450	58 604 315
	2. Ներքին Գետաշեն համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում		ասֆալտապատում	247 781 000	152 725 110
	3. Ներքին Գետաշեն համայնքի փողոցների լուսավորության ցանցի կառուցում		փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	37 860 034	25 590 522
Ծովինար	1. Ծովինար համայնքի մուր մանկապարտեզի վարչական շենքի վերանորոգում / 2-րդ փուլ /		մանկապարտեզների կառուցում, վերակառուցում/նորոգում	40500000	25954500

	2. Ծովինար համայնքի առուների կառուցման աշխատանքներ	ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	18 000 000	13 275 500
	3. Ծովինար համայնքի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում	ասֆալտապատում	99 332 000	61 102 761
	4. Ծովինար համայնքի ներհամայնքային փողոցների լուսավորության համակարգի կառուցում	փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	9 877 865	7 142 112
Ծակքար	1. Ծակքար համայնքի բնական կամուրջ - հուշարձանը տանող ճանապարհի կառուցում և լուսավորում	ասֆալտապատում	17 979 000	11 350 700
	2. Ծակքար համայնքի 3րդ և 10-րդ փողոցների լուսավորության ցանցի կառուցում	փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	14 040 000	9 717 483
	3. Ծակքար համայնքի 6-րդ փողոցի ասֆալտապատում	ասֆալտապատում	45 934 000	30 857 204
Ընդամենը	43 ծրագիր			1367790364 դրամ

2021թ. հաստատվել են հետևյալ սուբվենցիոն ծրագրերը

- «Վերին Գետաշեն համայնքի ներհամայնքային փողոցների սալարկման աշխատանքներ», ծրագրի ընդհանուր արժեքը՝ 89610170,0 դրամ, համայնքի ներդրումը՝ 26883051,0 դրամ, պետական ներդրումը՝ 62727119,0 դրամ:
- «Վերին Գետաշեն համայնքի ներհամայնքային ոռոգման առուների կառուցման աշխատանքներ» ծրագրի ընդհանուր արժեքը՝ 50904510,0 դրամ, համայնքի ներդրումը՝ 15271353,0 դրամ, պետական ներդրումը՝ 35633157,0 դրամ:
- Գեղհովիտ համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցում ծրագրի ընդհանուր արժեքը՝ 61,185,200 դրամ, համայնքի ներդրման չափը՝ 21,414,820 դրամ, պետական ներդրման չափը՝ 39,770,380 դրամ:
- Գեղհովիտ համայնքի ոռոգման ջրատար առուների կառուցում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 29,817,120 դրամ, համայնքի ներդրման չափը՝ 8,945,140 դրամ, պետական ներդրման չափը՝ 20,871,980 դրամ:
- Զուլաքար համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի կառուցման աշխատանքների իրականացման համար հատկացվել է 45.000.000 դրամ, որից 13.500.000 դրամ համայնքի համաֆինանսավորմամբ, պետական բյուջեի միջոցներից՝ 31.500.000 դրամ:
- Վաղաշեն համայնքի «Մեծ գուլեր» կոչվող տարածքից մինչև բնակավայր ջրաբքիացման, ոռոգման և կենցաղային ջրատար համակարգի կառուցում, ծրագրի

					ող դոտացիան եր, ՊԲ համայնքի վարչական բյուջեին տրամադրվ ող այլ դոտացիան եր`			դրամ աշնո րհնե ր` ստ ացվա ծ միջա զգայի ն կազմ ակեր պությ ուննե րից
Վերին Գետաշեն	145458,2	32447,5	16 182,0	5206 ,0	113 010,7	4 446,0	105 655,0	0
Ծովինար	79168,8	30549,8	19557,3	3 491, 6	48 619,2	872,7		
Մաղինա	32512,4	9407,4	2 618,7	2 904, 4	23 105,0	2 063,6		
Երանոս	165476,3	45848,9	28295,4	1083 6,4	116184,0	2000, 0	0	0
Զորագյուղ	126246,0	39820,0	25701,9	1083 1,5	87425,6	1116, 0	0	0
Վաղաշեն	194781,1	16770,5	9000,0	5300 ,0	104967,5		73043,1	0
Լիճք	150273,0	52024,4	24879,1	1272 8,4	98241,6		0	0
Մարտունի	464200,7	158857,2	56805,8	1105 5,4	292420,5	4330, 0	565,4	0
Ծակքար	79168,8	30549,6	19557,3	3301 ,0	48619,2	872,7	0	0
Արծվանիստ	88882,2	21005,7	9983,8	6371 ,9	67876,5	2350, 0	0	0
Զուլաքար	250980,2	22889,9	12048,7	7471 ,0	168310,1	430,0	59780,0	0
Աստղաձոր	129920,9	21703,0	110480,0	7100 ,0	108217,9	0	0	0
Ներքին Գետաշեն	236225,0	30793,3	18677,4	6892 ,1	205481,7	743,8	0	0

Գեղիովիտ	181145,0	33101,2	15400,0	1000 0,0	148048,8	2157, 0	0	0
Ծովասար	118654,0	30102,1	14901,7	9127 ,4	53972,2	3679, 0	34579,9	0
Վարդենիկ	250411,0	46052,1	22832,1	1404 0,0	201325,0	1791, 0	0	0
Ընդամենը՝	2693503, 6	621940,6	4069*21, 2	1266 58,0	1885825,5	26851 ,8	273623,4	0

Տվյալներ Սարտունի համայնքի/ նախկին համայնքների 2021 թվականի տարեկան բյուջեի վերաբերյալ (հազ.դրամ)

Նախկին համայնքի անունը	Ընդհանուր եկամուտները	Սեփական եկամուտներ	Գույքահարկ	Հողի հարկ	ՊԲ-ից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ, ՊԲ համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ՝	Հողերի վարձավճարներ՝	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ ստացված կառավարման այլ մակարդակներից	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	
Վերին Գետաշեն	169967,3	33388,8	17223,0	7306,0	136578,7	4445,0	0	0	
Ծովինար	172930,0	31273,8	15802,0	8587,4	141656,6	812,6	0	0	
Մադինա	35927,7	8517,1	4501,7	616,0	27410,6	2451,6	0	0	
Երանոս	171995,6	45848,9	26295,4	10866,4	126146,0	2000,0	0	0	
Զորագյուղ	176031,1	45258,2	32199,7	10831,5	109874,9	1056,0	0	0	
Վաղաշեն	143881,7	18230,5	9000,0	5300,0	125651,2	500,0	0	0	
Լիճք	175320,0	54032,0	27590,7	11828,4	30322,1	1817,0	0	0	

Մարտունի	498776,0	154791,0	60830,0	11300,0	324884,3	4000,0	0	743,2	
Ծակքար	113195,0	32246,2	20887,4	3310,0	56732,6	980,0	0	24216,8	
Արծվանիստ	101924,9	21553,7	10581,8	6371,9	80371,2	2350,0	0	0	
Զոլաքար	277962,5	37916,7	16302,0	7171,7	200083,3	470,0	39962,7	0	
Աստղաձոր	148342,9	17015,0	11300,0	1300,0	131327,0	930,0	0	0	
Ներքին Գետաշեն	154443,0	31191,7	18677,4	6924,2	249297,8	759,7	0	0	
Գեղհովիտ	214622,7	35961,5	18166,1	10000,0	178661,2	2251,2	0	0	
Ծովասար	156456,3	30726,3	14591,0	10005,6	64797,7	3736,0	0	0	
Վարդենիկ	277808,0	37254,8	24161,8	5298,0	237522,3	1813,0	0	0	
Ընդհամենը	2618519,3	635185,9	328110,0	117017,1	2468317,5	30372,1	39962,7	24959,7	

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով դոտացիաներ տրամադրելու և ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2020թ. բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հատկացումների ընդհանուր ծավալի (հազ. դրամ) բաշխումն մինչև խոշորացումը ըստ համայնքների կազմել է՝ Մարտունի՝ 323 847,2, Արծվանիստ՝ 80 658,4, Երանոս՝ 129 874,8, Ծովասար՝ 65 238,6, Զորագյուղ՝ 110 532,3, Վաղաշեն՝ 126 755,0, Վարդենիկ՝ 243 089,5, Աստղաձոր՝ 134 976,8, Զոլաքար՝ 203 305,0, Լիճք՝ 122 735,4, Ծակքար՝ 57 681,9, Ծովինար՝ 145 351,7, Մադինա՝ 27 372,8, Ներքին Գետաշեն՝ 255 446,9, Վերին Գետաշեն՝ 137 337,6, Գեղհովիտ՝ 179 281,9:

Միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում համայնքի զարգացման 2020-2024թթ. ծրագրում նախատեսված է ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում:

[«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին»](#) ՀՀ օրենքին համապատասխան ընկերությունների կողմից տրված հարկերի հաշվին իրագործվող սուբվենցիոն ծրագրերի համար նախատեսվող գումարներ չեն եղել, քանի որ այդ կազմակերպություններն ընդգրկված չեն եղել օրենքով սահմանված ընկերությունների ցանկում:

Համայնքի վարչական տարածքում գործունեություն իրականացնող ոչ-մետաղական հանքավայրեր շահագործող կազմակերպությունների ընդերքօգտագործման պայմանագրերով ազդակիր համայնքի/բնակավայրի նկատմամբ ստանձնած սոցիալ-տնտեսական օժանդակություն չափը կազմում է 1,020 մլն. դրամ:

Համայնքի տարածքում էլեկտրաէներգիայի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների և համայնքների միջև կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գրավոր պայմանագրեր չեն կնքել: Չնայած դրան, առանձին կազմակերպություններ, օրինակ՝ «Հիդրոկորպորացիա» ՓԲԸ-ն, ըստ համայնքի բնակիչների, 2015թ., «Արգիճի» ՓՇԷԿ-ի շինարարության համար համայնքի բնակչության համաձայնությունն ստանալու գործընթացում անցկացված հասարակական լսումների ժամանակ բանավոր խոստացել է, որ համաձայնություն տալու դեպքում ընկերության տարեկան եկամուտներից որոշակի մասնահանումներ կկատարի Վերին Գետաշեն համայնքի զարգացման, համայնքի մանկապարտեզի և անապահով ընտանիքներին օգնելու համար: Տված խոստումը ընկերությունը չի կատարել մինչև 2019 թվականի փետրվար ամիսը: 2019 թվականին Վերին Գետաշեն համայնքի բնակիչները դիմում-պահանջագիր են ներկայացրել «Արգիճի» ՓՇԷԿ-ը շահագործող «Հիդրոկորպորացիա» ՓԲԸ-ի տնօրինությանը, որով պահանջել են, որպեսզի ընկերությունը կատարի իր վերցրած պարտավորությունները: Բնակիչները պահանջել են, որ Ընկերությունը տարեկան իր եկամուտներից տարվա կտրվածքով 50 միլիոն գումարի չափով գումար փոխանցի Վերին Գետաշենի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին՝ սկսած 2015թ-ից: Միաժամանակ գրել են, որ դիմում-պահանջագիրը չբավարարելու պարագայում «ազգաբնակչությունը թույլ չի տալու, որպեսզի ՀԷԿ-ը շարունակի իր գործունեությունը»: Ընկերությունն այս ամենը գնահատել է որպես «շոթթման հանցակազմ պարունակող գործողություն, ինչի կապակցությամբ ընկերությունը ոչ միայն չի պատրաստվում ընդառաջ գնալ նշված պահանջին, այլ դիմելու է համապատասխան ատյաններին՝ նշված գործողություններին որակում, ինչպես նաև իրավական գնահատական տալու կապակցությամբ: 2019 թվականի Փետրվարի 26-ին տեղի է ունեցել հանդիպում նաև ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետի, շահագործող կազմակերպության տնօրենի, համայնքի ղեկավարի և բնակիչների միջև: Քննարկման արդյունքում որոշվել է բացել ՀԷԿ-ը պայմանով, որ զուգահեռ կընթանան նաև հարցի լուծմանն ուղղված քննարկումներ: Փետրվարի 27-ին ՀԷԿ-ը վերսկսել էր իր աշխատանքը: <https://martuniinfo.blogspot.com/2019/03/blog-post.html>:

Արդյունքում ընկերությունը դիմել է դատախազություն, գործն այժմ գտնվում է Քննչական կոմիտեում:

Ըստ Վերին Գետաշենի համայնքապետ Տիգրան Մուրադյանի՝ «Արգիճի» ՓՇԷԿ-ի շահագործման հետևանքով Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն համայնքի 350 հա հողատարածքն արդեն 7 տարի շարունակ՝ 2012 թ. սկսած, անջրդի է: ՓՇԷԿ-ի շահագործումից հետո համայնքն իր ուժերով կառուցել է պոմպակայան, որը խողովակաշարով Արգիճի գետից ջուր է մղում դեպի համայնք: Պոմպակայանի աշխատանքի արդյունքում հնարավոր է լինում ոռոգել համայնքի միայն մոտ 150 հա հողատարածք, մնացած 350 հա-ը բացարձակ անջրդի է»: Համայնքի ղեկավարի ներկայացմամբ, «Հիդրոկորպորացիա» ՓԲԸ-ն 2012 թ. համայնքին մի տեղեկանք էր տվել, ըստ որի՝ 500 հա հատվածում 400 լ/վ արագությամբ ջրթող է անելու: Համայնքն այդ նպատակով ՀՀ կառավարության աջակցությամբ 110 միլիոն դրամով ջրագիծ էր կառուցել՝ 3 կմ երկարությամբ խողովակաշարով: Սակայն մինչ օրս դրանով ջուր չի հոսել:

«Փոշիացվել են պետության գումարները՝ խողովակաշարը կառուցվել է և չի շահագործվում», - նշեց համայնքի ղեկավարը:

Համայնքի 2020-2024թթ. զարգացման ծրագրով նախատեսվում է նաև համայնքի ոռոգման համակարգի բարելավում և ընդլայնում, որն, ըստ զարգացման ծրագրի, հնարավոր է իրականացնել «Գյուղատնտեսական տարածքների տնտեսական զարգացման» ԾԻԳ ՊՀ ֆինանսավորմամբ, մինչդեռ ժամանակին «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի հետ հանդիպման ժամանակ համայնքապետը նշել էր, որ նախատեսում են նոր պոմպակայան կառուցել այդ 350 հա-ը ոռոգելի դարձնելու նպատակով, որի համար անհրաժեշտ գումարը մտադիր են ստանալ «Արգիճի» ՓՀԷԿ-ը շահագործող «Հիդրոկորպորացիա» ՓԲԸ-ից:

Տիգրան Մուրադյանի խոսքով՝ համայնքի 10-12 սեփականուների տնամերձ հողատարածքներում ընկերության էլեկտրայուններն են դրված, բայց այդ մարդկանց հետ որևէ պայմանագիր մինչ օրս կնքված չէ: Ավելին, որևէ փոխհատուցում նույնպես չի տրամադրվել: Պատշաճ փոխհատուցում չեն ստացել նաև այն գյուղացիները, որոնց հողատարածքներով «Արգիճի» ՓՀԷԿ-ի շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ անցել է ընկերության տեխնիկան:

2019 թ. միջոցառումից հետո «Հիդրոկորպորացիա» ՓԲԸ-ն, Վերին Գետաշենի համայնքապետարան մի գրություն է ուղարկել խնդրելով ներկայացնել այն ընտանիքների ցուցակը, ովքեր դժգոհ են ընկերության կողմից իրականացված ոչ պատշաճ փոխհատուցումից: «Շինարարական աշխատանքների կատարման ավարտից հետո պատշաճ փոխհատուցում չի տրվել: Ցուցակը խնդրել են, որպեսզի ուսումնասիրեն, հասկանան, թե որքան պետք է տալին, որ չեն տվել: Հողային հարցերով բողոքը ներկայացրել է 10-15 ընտանիք: Ընդհանուր համայնքին ուղղված առաջարկներ չեն անում», - ասաց Մուրադյանը: <https://www.ecolur.org/hy/news/water/11051/>:

«Ջրասահք: ՄՊԸ-ի ղեկավարությունը նույնպես մի քանի անգամ արտահայտվել է ազդակիր Վարդենիկ համայնքին ցուցաբերել տարբեր տեսակի սոցիալական օժանդակություն, սակայն այդպես էլ չի իրականացրել տված խոստումները <https://www.ecolur.org/hy/news/sevan/10190/>

<https://www.ecolur.org/hy/news/sevan/10191/>:

Մարտունու համայնքապետարանի և «Մարտունի» փոքր ՀԷԿ-ը շահագործող «ՄԿՇԳ ԷՆԵՐԳԻԱ» ՄՊԸ-ի միջև 2018թ. ձեռք է բերվել պայմանավորվածություն, որի համաձայն ՓՀԷԿ-ը շահագործող ընկերությունը տարեկան 2 միլիոն դրամ է փոխանցում համայնքապետարանին <https://www.ecolur.org/hy/news/water/10206/>,

<https://www.ecolur.org/hy/news/sevan/12705/> :

Համայնքի տարածքում ոչ-մետաղական հանքավայրեր շահագործող կազմակերպությունների ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնած համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման օժանդակության պարտավորությունների մասին

- 1. «ՔԱԼՈՅԱՆ» ՄՊԸ- Պ-598 ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված են՝ համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն տարեկան 50,0 հզ. դրամով, մանկապարտեզի, դպրոցի վերանորոգման աշխատանքներին մասնակցություն տարեկան 70,0 հզ. դրամով, դպրոցի կարիքների համար յուրաքանչյուր տարի տրամադրել 40,0 հզ. դրամ, միջհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման աշխատանքներին մասնակցություն՝ շինարարական տեխնիկայի տրամադրմամբ:
- 2. «ՇՈՂԱԳԱ» ՄՊԸ- Պ-600 ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված են՝ համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն տարեկան

50,0 հզ. դրամով, մանկապարտեզի, դպրոցի վերանորոգման աշխատանքներին մասնակցություն տարեկան 70,0հզ. դրամով, դպրոցի կարիքների համար յուրաքանչյուր տարի տրամադրել 40,0 հզ. դրամ, միջհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման աշխատանքներին մասնակցություն՝ շինարարական տեխնիկայի տրամադրմամբ:

3. «ՍՅՈՒԶԻ-ՀՐԱԶՅԱ» ՍՊԸ- N Պ-638 ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին, այդ թվում՝ մանկապարտեզի, դպրոցի վերանորոգման աշխատանքներին մասնակցություն, վճարելով համայնքի բյուջե տարեկան՝165,0 հզ. դրամ, միջհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման աշխատանքներին մասնակցություն՝ տեխնիկայի տրամադրմամբ:

4. «ՄԵՐ ՔԱՐԵՐ» ՍՊԸ- Պ-639 ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված է համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին, այդ թվում՝ անապահով ընտանիքներին դեղորայքի տրամադրման գործընթացների մասնակցություն՝ տարեկան 270,0 հզ. դրամ:

5. «ՄԱՐԻԱՄ-ԳԱՐԻԿ» ՍՊԸ - Պ-644 ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված է համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն, այդ թվում՝ համայնքի տրամադրության տակ գտնվող տեխնիկայի վերանորոգման աշխատանքներին մասնակցություն, սոցիալապես անապահով ընտանիքներին դեղորայքի տրամադրում՝ վճարելով համայնքի բյուջե՝ տարեկան 270,0 հզ. դրամ:

6. «ԲԱՐՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ, ՇԱԹՎ-29/143, 2015, Պ-143 ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման օժանդակության դրույթներ չեն նախատեսվել:

7. «Պերլարո լոկալ ինվեսթմենթս» ՍՊԸ, ՇԱԹՎ-29/226, Պ-226 ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման օժանդակության դրույթներ չեն նախատեսվել: